«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Համագործակցային ուսուցման կազմակերպումը

աշխարհագրության դասերին

Առարկան՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Նաիրա Մեջլումյան

Ուսումնական հաստատություն՝ ք. Արտաշատ. Ա. Գոլեցյանի անվան թիվ 1 հ/մ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ..... 5

Համագործակցային ուսուցում ..... 5

Հմագործակցային ուսուցման տարրերը..... 6

Համագործակցային ուսուցման առավելությունները ..... 8

Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ..... 9

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ..... 10

ՍԵՓԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..... 12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 14

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 15

ՀԱՎԵԼՎԱԾ..... 16

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Աշխատանքի արդիականությունը:** Ներկայումս մեր երկրի կարևոր հարստություններից մեկը գիտական ներուժն է, որի ձևավորման պատասխանատվությունը կրում է նաև հանրակրթությունը: Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը:Հասարակական բոլոր փոփոխությունները անդրադառնում են նաև կրթական համակարգին: Հայաստանում, ինչպես և ամբողջ աշխարհում ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով: Հայաստանը լիիրավ ինտեգրվել է համընդհանուր տնտեսությանը, տարածաշրջանային քաղաքականությանը և համընդհանուր ջանքերին՝ իր քաղաքացիների կյանքի պայմանները բարելավելու և խաղաղությունը պահպանելու ու զարգացնելու նպատակով: Հայաստանի դպրոցներն այսօր առնչվում են միայն խոչընդոտների: Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումները:

Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի ու ավելի է կիրառվում՝ որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն: Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Այն ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնելու համար, ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ընկալումը, միջանձնային հմտությունների զարգացումը և այլն: Ժամանակակից ուսուցման պրակտիկայի լավագույն օրինակը փոքր խմբային աշխատանքն է:

Աշխատանքի **նպատակն** է հետազոտել տարբեր դասարաններում համագործակցային մեթոդների կիրառման առավելությունները և թերությունները, նպաստել կրթության որակի, սովորողների ակտիվության բարձրացմանը,

միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն:

Նպատակին հասնելու համար առաջադրվել լուծվել են հետևյալ **խնդիրները՝**

- Ուսումնասիրել համագործակցային դասեր պլանավորելու մեթոդական սկզբունքները:
- Ստեղծել ուսուցման համագործակցային դասի պլան:
- Կազմակերպել այդ պլանով դասեր՝ մանկավարժական պրակտիկայի շրջանակներում:
- Բացահայտել դասի պլանի հաջողված և չհաջողված կողմերը:

# ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

**Համագործակցային ուսուցում.** Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ: Հասարակությունը դպրոցին և հատկապես ուսուցչին է լիազորել իր ապագայի կերտումը: Այս աշխատանքում ցանկանում ենք անդրադառնալ համագործակցային մեթոդների, փոքր աշխատանքային խմբերի արդյունավետ կիրառելիությանը: [1] Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: [1, 2] Կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն այդ հմտություններին տիրապետելը,ալև արժևորելը և կյանքում դրանք համապատասխան իրավիճակներում կիրառելը: Ուստի մեր խնդիրն է աշխարհագրության դասաժամերին համագործակցային ուսուցման շնորհիվ աշակերտների մոտ ձևավորել այնպիսի որակներ, զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք համահունչ կլինեն կրթության ժամանակակից պահանջներին, իսկ շրջանավարտը՝ կրթական հաստատությունում ձեռք բերածը կկարողանա կիրառել կյանքում: [3]

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս [4]:

«Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»: [5] Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Հայաստանի դպրոցներն ի տարբերություն այլ երկրների դպրոցների ավելի շատ հիշեցնում են ուսուցիչների և սովորողների ավանդական համայնքներ: Ուստի համագործակցային ուսուցումը Հայաստանում ունի ներդրման ու զարգացման համար անհրաժեշտ հիմք և բարենպաստ պայմաններ [3, 6]:

**Համագործակցային ուսուցման տարրերը.** Երբեմն համագործակցային ուսուցումը անվանում են «Փոքր խմբային ուսուցում»: Այն ուսումնական ռազմավարություն է, որում աշակերտների փոքր խմբերը աշխատում են միասին մի ընդհանուր հանձնարարության վրա: Հանձնարարությունը կարող է լինել հեշտ, պարզից բարդ անցումով:

Ըստ Դեյվիդ Ջոնսոնի և Ռոջեր Գոնսոնի, կան 5 հիմնական տարրեր, որոնք նպաստում են հաջող խմբային ուսուցմանը [7]: Դրանք են.

1. Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջացելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար։
3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը։
4. Սոցիալական հմտություններ.Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը։
5. Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է։ Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը [5, 7]։

Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր։ Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը։

Համագործակցային ուսուցումը փոխում է աշակերտի և ուսուցչի դերը դասարանում։ Դասավանդման և ուսուցման ղեկավարումը բաժանվում է աշակերտների խմբերի կողմից (միջև)։ Աշակերտները ավելի շատ հնարավորություն են ստանում սովորելու, հարցնելու, միմյանց հետ կիսվելու, ինչպես նաև քննարկելու իրենց գաղափարները։

Համագործակցային ուսուցումն օգնում է աշակերտներին ներգրավելու բանավեճի և քննարկել տարբեր հեռանկարներ։

**Համագործակցային ուսուցման առավելությունները.** Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, ինչը ևս կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է [3]: Նշենք նաև, որ ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը: Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ:

Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ): Համագործակցային ուսուցման իմաստն է՝

- ✓ Յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ:
- ✓ Անհատին դարձնել ակտիվ և կարող լինելու խմբի անդամ և համագործակցելու [8]:

Եթե աշակերտներին պարզապես բաժանենք խմբերի և առաջարկենք միասին աշխատել, ապա դա չի նշանակում, որ նրանց մղել ենք արդյունավետ համագործակցության: Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են, որ կարող են ապահովել համագործակցային ուսուցում:

Համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարևոր է խմբերի մեծությունը: Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն

ունեն։ Չորս հոգանոց խմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվությունը և միաժամանակ ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ։ Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից և ընտրված մեթոդից։ Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտի ակտիվությունը դասապրոցեսում։ Ակնհայտ է, որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի, պասիվ վիճակում գտնվելով։ Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին։ Փոքր խմբերով ուսուցումը կարևորվում է նաև այն առումով, որ դասարաններում աշակերտների խտության մեծացման արդյունքում զգալիորեն դժվարանում է ուսուցման ֆրոնտալ անհատական հարցման ձևերի կիրառումը։ Երբ ուսուցիչն աշխատում է դասարան (մեծ) խմբի հետ, ապա աշակերտները արտահայտվելու, քննարկելու ավելի քիչ հնարավորություններ են ունենում։ Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են։ Փոքր խմբերով ուսուցումը ունի հետևյալ նպատակները [3, 5].

- զարգացնում է խնդիրներ լուծելու կարողություն,
- ձևավորում է հաղորդակցման հմտություն,
- աշակերտները սովորում են միմյանցից,
- զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը,
- միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում,
- խթանում է թիմային աշխատանքը,
- ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,
- քննարկումների միջոցով ամրապնդվում է աշակերտների համոզմունքները,
- ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն։

**Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ.** Ուսուցչի գործը հասարակության շրջանում ամենից կարևորվող, ամենամեծ հնարամտություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է։ Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին

կառավարելու և օգնելու նոր եղանակներ, նաև՝ երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալում [9]:

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել:Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով: Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:

**ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ.** Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Ստորև ներկայացնում ենք համագործակցային ուսուցման մի շարք մեթոդներ: Դրանք են՝ աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, երեք բանալի և մեկ կողպեք, հինգրոպեանոց ազատ շարադրանք:

**Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ**: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է,որ

հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին [2, 6]:

**Խճանկար (Ջիգսո, Jigsaw)**: Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից [6]: Խճանկարի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

**Շրջագայություն պատկերասրահում**: Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ [6]:

**Երեք բանալի և մեկ կողպեք**: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն [6, 8]

**Հինգրոպեանոց ազատ շարադրանք**: Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք [2, 8]:

# ՍԵՓԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի իրականացման ընթացքում կիրառվել է համագործակցային մեթոդներից «Երեք բանալի և մեկ կողպեք» մեթոդը: Մեթոդը կիրառվել է դասապրոցեսի իմաստի ընկալման փուլում, որը հանդիսանում է տեքստի ընկալման, վերլուծության, գլխավորը երկրորդականից տարբերելու, սեփական կարծիքը հիմնավորելու, ընդհանրացման, համագործակցային հմտությունների զարգացման արդյունավետ ձև:

Յուրաքանչյուր դասարանում դասի ընթացքում կիրառվել են նաև դասավանդման այլ մեթոդներ (Հավելված բաժնում տրված են յուրաքանչյուր դասապլան), իսկ դասի ավարտին աշակերտները լրացրել են դասին վերաբերող վիկտորնաներ Քուիզիզ հավելվածի կիրառամամբ:

7-րդ դասարանում որտեղ սովորում են 11 աշակերտներ, «Բնակչության սեռատարիքային կազմը: Աշխատանքային ռեսուրսներ» թեման ուսումնասիրելիս ստացվել են հետևյալ արդյունքները՝

100% - 3 աշակերտ

80% - 4 աշակերտ

60% - 3 աշակերտ

40% - 1 աշակերտ

Այսպիսով 7-րդ դասարանում ուսման որակը վերը նշված մեթոդի կիրառմամբ մեկ դասի համար կազմել է 63%:

8-րդ դասարանում, որտեղ սովորում են 13 աշակերտներ, «Արևմտյան Եվրոպա. Տնտեսությունը» թեման ուսումնասիրելիս ստացվել են հետևյալ արդյունքները՝

100% - 6 աշակերտ

80% - 2 աշակերտ

60% - 3 աշակերտ

40% - 2 աշակերտ

Այսպիսով 8-րդ դասարանում ուսման որակը վերը նշված մեթոդի կիրառմամբ մեկ դասի համար կազմել է 61%։

9-րդ դասարանում, որտեղ սովորում են 12 աշակերտներ այս մեթոդով անցկացվել է երկու դաս։

« ՀՀ բուսականությունը և կենդանական աշխարհը» թեման ուսումնասիրելիս ստացվել են հետևյալ արդյունքները՝

100% - 4 աշակերտ

80% - 4 աշակերտ

60% - 1 աշակերտ

40% - 3 աշակերտ

«ՀՀ լանդշաֆտները։ Վերընթաց գոտիականություն» թեման ուսումնասիրելիս տացվել են հետևյալ արդյունքները։

100% - 4 աշակերտ

80% - 3 աշակերտ

60% - 3 աշակերտ

40% -2 աշակերտ

Այսպիսով 9-րդ դասարանում ուսման որակը վերը նշված մեթոդի կիրառմամբ առաջին դասի համար կազմել է 66%, իսկ երկրորդ դասի համար կազմել է 75%։

Մեթոդը բոլոր դասարաններում կիրառվեց դասի իմաստի ընկալման փուլում, սակայն տարբեր դասարաներում տարբեր էին դաս խթանման և կշռադատման փուլերի ընթացքում կիրառված մեթոդները(Հավելված)։ Բոլոր դեպքերում էլ աշակերտների ակտիվ մասնակցությունը ապահովված էր։ Դասը հետաքրքիր և յուրահատուկ էր անցնում յուրաքանչյուր աշակերտի համար։ իսկ 9-րդ դասարանում մեթոդի երկրորդ անգամ կիրառելը ավելի բարձր ցուցանիշ գրանցեց, ինչը վկայում է մեթոդի արդյունավետության մասին։

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 9-րդ դասարանում մեթոդը կիրառվել է «ՀՀ բուսականությունը և կենդանական աշխարհը», և «ՀՀ լանդշաֆտները: Վերընթաց գոտիականություն» թեմաները ուսումնասիրելիս և որակական առաջադիմությունը կազմել է համապատասխանաբար 66% և 75%: Կարելի է ասել, որ նշված մեթոդի արդյունավետությունը բարձր է, և այն արդյունավետ է բարձր դասարանների համար:
2. 8-րդ դասարանում մեթոդը կիրառվել է «Արևմտյան Եվրոպայի տնտեսությունը» թեման ուսումնասիրելիս և որակական առաջադիմությունը կազմել է 61%: Առաջարկվող մեթոդը առավել ցածր արդյունավետություն ունի տնտեսական աշխարհագրության ցիկլի առարկաների դասավանդման ժամանակ:
3. 7-րդ դասարանում մեթոդը կիրառվել է «Բնակչության սեռատարիքային կազմը: Աշխատանքային ռեսուրսներ» թեման ուսումնասիրելիս և որակական առաջադիմությունը կազմել է 63%: Մեթոդը արդյունավետ է Հասարակական աշխարհագրության ցիկլի առարկաների դասավանդման համար:
4. Մեթոդի կիրառությունը դպրոցի երեք դասարաններում թույլ տվեց եզրակացնել, որ այն ընդհանուր առմամբ արդյունավետ է դպրոցական աշխարհագրության դասավանդման ժամանակ, իսկ բազմակի կիրառման դեպքում էլ ավելի է բարձրանում մեթոդի արդյունավետությունը:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Ադամյան Ն., Դասավանդման մեթոդիկայի արդի տեխնոլոգիաներ, Ուսումնամեթոդական ձեռնարկ, «Էդիթ Պրինտ», Երևան 2018, 264 էջ:.
2. Խաչատրյան Ա. Բերոյան Գ. Մինասյան Ռ. Աշխարհագրություն առարկայի ուսուցիչների 4-օրյա վերապատրաստումների ուսումնական նյութերի փաթեթ, Երևան Անտարես, 2009, 124 էջ
3. Հովսեփյան Ա., Բաղդասարյան Ա., Մարկոսյան Ա., Աշխարհագրություն, Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների ծրագիր և նյութեր, Երևան, 2007, էջ 120:.
4. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, 123 էջ:
5. Մանասյան Մ., Հովսեփյան Ա., Աշխարհագրություն, Հայաստան, Հանրակրթական դպրոցի 9-րդ դաս. Դասագիրք, Երևան, Տիգրան Մեծ, 2014, 240 էջ:.
6. Մանասյան Մ. ,Հովսեփյան Ա. Աշխարհագարություն Հայաստան 9-րդ դաս. ուսուցչի ձեռնարկ, Երևան Տիգրան Մեծ, 2014, 86էջ
7. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, 402 էջ:.
8. Johnson, D., Johnson, R. (1999). Learning together and alone: cooperative, competitive, and individualistic learning. Boston: Allyn and Bacon.
9. http://www.noravank.am/upload/pdf/27_am.pdf
10. https://znanio.ru/media/-----2615121
11. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf

# ՀԱՎԵԼՎԱԾ

## Դասապլան

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Առարկա՝ | Աշխարհագրություն | Ամսաթիվ | | Կիսամյակ | I | Դասարան | 7-րդ |
| Խմբի բացվածք՝ | Աղջիկ: 5 Տղա: 7 OS - ՈՒՀԿ: - | | | | | | |
| Թեմա՝ | *Բնակչության սեռատարիքային կազմ: Աշխատանքային ռեսուրսներ* | | | | | | |
| Օգտագործվող նյութեր՝ | *Դասագիրք, տետր, Աշխարհի քաղաքական քարտեզ* | | | | | | |
| Ամբողջական պատկեր՝ | *Սովորողները արդեն ծանոթ են աշխարհի բնակչության թվին, ծանոթ են բնակչության թվի շարժին, գիտեն բնակչության վերարտադրության տիպերը: Կարողանում են տարբերակել բնակչության միգրացիայի տեսակները:*<br>*Այդ գիտելիքների հիման վրա նրանք կկարողանան սովորել բնակչության կարևոր բնութագրիչներից մեկը՝ կազմը, և կկարողանան թվարկել բնակչության կազմը բնութագրող ցուցանիշները:* | | | | | | |
| Դասի նպատակը՝ | *Իմանալ բնակչության կազմը բնութագրող ցուցանիշները , վերլուծել յուաքանչյուր ցուցանիշի աշխարհագրական առանձնահատկությունները:* | | | | | | |
| | Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ | | | | | | |

| | |
|---|---|
| Վերջնարդյունքները | *Աշակերտը կկարողանա.*<br>• *Ներկայացնել* բնակչության կազմի տեսակները (սեռային, տարիքային, ռասսայական, ազգային (էթնիկական), կրոնական, լեզվական) և *վերլուծել* դրանց աշխարհագրական առանձնահատկությունները:<br>• *Համեմատել* և *բացատրել* առնվազն երկու տարբեր պետությունների սեռատարիքային բուրգերի կառուցվածքը:<br>• *Քննարկել* երիտասարդ և ծերացող բնակչություն ունեցող երկրների հիմնական խնդիրները:<br>• *Համեմատել* բնակչության զբաղվածության կառուցվածքը տարբեր տիպի երկրներում:<br>• *Բնորոշել* աշխատանքային ռեսուրսներն ըստ որակական և քանակական ցուցանիշների:<br>• *Գնահատել* աշխատանքային ռեսուրսների դերը և ժողովրդագրական գործընթացների կառավարման կարևորությունը: |

| Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները | Նպատակներին հասնելու ռազմավարությունը |
|---|---|
| *Աշակերտների հետաքրքրությունների մեծացում դասապրոցեսին և առողջ համագործակցության ապահովում:* | *Խմբային աշխատանք, քարտեզների ուսումնասիրում, սեռատարիքային բուրգերի վերլուծություն* |

| Գործողություններ (ժամ/տևողություն) | Ուսումնական գործունեություն<br><br>*Աշակերտներ* | Պլանավորած տարբերակում և ՈՒԳ ռազմավարություններ<br><br>*Ուսուցիչ* | Առանցքային հարցեր<br><br>Հիմնական ստուգումներ<br><br>(հանձնարարությա ն վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին) |
|---|---|---|---|
| 10 րոպե | *Աշակերտները պլանավորված հարցերի միջոցով կներկայացնեն Աշխարհի բնակչության տեղաբաշխումը և միգրացիաները* | *Ֆրոնտալ հարցումով անդրադարձ կատարել հին նյութին, ստուգելով սովորողների ունեցած գիտելիքները Բնակչության տեղաբաշխման և միգրացիաների վերաբերյալ:* | *Ի՞նչ է բնակչության տեղաբաշխումը: Ո՞րոնք են բնակչության բնակչության տեղաբաշխման վրա ազդող գործոնները: Ի՞նչ է բնակչության միգրացիան, որոնք* |

| | | | |
|---|---|---|---|
| | | <<Երեք բանալի և մեկ կողպեք>> մեթոդով անցկացնել դասը | են դրա պատճառները: Որո՞նք են միգրացիայի տեսակները: (Նպ. Գիտելիքների ստուգում և վերհանում): |
| 15 րոպե | Հանձնարարությունը յուրաքանչյուր խմբի աշակերտ նախ կատարում է առանձին, այնուհետև քննարկում է իր երեք նախադասությունները և մեկ ամփոփիչ նախադասությունը խմբի բոլոր անդամների հետ:<br><br>Խումբը համատեղ աշխատանքով ձևակերպում է ընդհանուր պարբերության երեք հիմնական նախադասությունները և մեկ ընդհանուր նախադասությունը: | Դասարանը բաժանել 3 խմբի և յուրաքանչյուր խմբին հանձնարարել ընթերցել դասի մեկ հատված՝<br>1. Բնակչության սեռային կազմը<br>2. Բնակչության տարիքային կազմը<br>3. Աշխատանքային ռեսուրսներ<br><br>Յուրաքանչյուր խմբին հանձնարարել գրել երեք նախադասություն, որոնք արտահայտում են տվյալ հատվածի հիմնական բովանդակությունը, և մեկ նախադասություն, որով կարելի է ամփոփել այն: | Նշե՛ք բնակչության սեռային կազմի և տարիքային կազմի առանձնահատկությունները տարբեր տիպի երկրներում: Նկարագրե՛ք և բացատրեք բնակչության սեռատարիքային բուրգերը: Ինչպիսի՞ն են բնակչության տարբեր կրթական մակարդակի տարբերություններ ը տարբեր տիպի երկրներում: (Նպ.՝ տրամաբանական մտածողության զարգացում) |
| 15 րոպե | Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր ձևակերպած երեք գլխավոր | Ուղղորդում է աշակերտներին և պատասխանում անհասկանալի հարցերին: | Բացատրե՛ք բնակչության սեռատարիքային բուրգը: |

| | | | |
|---|---|---|---|
| | *նախադասությունները, և մեկ ընդհանուր և ամփոփող նախադասությունը: Մեկնաբանում են, թե ինչու են կարևորել հենց այդ նախադասությունները:* | *Մեկնաբանում և ընդհանրացնում է աշակերտների արտահայտած մտքերը:* | *Համեմատե՛ք «տնտեսապես ակտիվ բնակչություն» և «աշխատանքային ռեսուրսներ» հասկացությունները: Համեմատե՛ք զարգացած և տնտեսապես հետամնաց երկրների աշխատանքային ռեսուրսների զբաղվածության մակարդակն և կառուցվածքը: (Նպ. Բարձր մտածողության հմտությունների զարգացում):* |
| **5 րոպե** | *Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր բաժնին վերաբերող հարցեր մյուս խմբի համար:* | *Հանձնարարել իմբերին քարտերի վրա հարցեր կազմել մյուս խմբի համար, և պատասխանում են անվանակոչածները սկզբունքով ստուգել աշակերտների ստացած գիտելիքները այս դասի ընթացքում* | *Արդյունքում կամբողջացվեն աշակերտների ստացած գիտելիքները Բնակչության սեռատարիքային կազմի: Աշխատանքային ռեսուրսներ թեմայի վերաբերյալ:* |
| **Տերմիններ**<br><br>**Գրագիտություն**<br><br>**Թվագիտություն** | *Սեռային կազմ, տարիքային կազմ, ցենզ(կրթական մակարդակ), աշխատանքային ռեսուրսներ, տնտեսապես ակտիվ բնակչություն:*<br><br>*Բնակչության սեռատարիքային կազմի բնութագրիչների իմացությունը, ինչպես նաև բնակչության սեռատարիքային բուրգի վերլուծության կարողությունը և աշխատանքային ռեսուրսների առանձնահատկությունների բացատրությունը, աշակերտների մոտ զարգացնում է աշխարհագրական գրագիտություն և թվաբանություն:* | | |

| | |
|---|---|
| Աջակցություն | |
| Գնահատում | *Գնահատել Խմբերի աշխատանքը և ակտիվ մասնակցություն ցուցաբերած աշակերտներին խրախուսանքով: Իսկ բարձր արդյունք ցուցաբերած աշակերտները կստանան թվանշանային գնահատականներ:* |
| Տնային աշխատանք | *Որպես տնային առաջադրանք հանձնարարել ներկայացնել և մեկնաբանել տարբեր երկրների բնակչության սեռատարիքային բուրգերը:* |
| Դասին անդրադարձ | *Դասն անցավ բավականին արդյունավետ և աշակերտների ակտիվ մասնակցությամբ: Աշակերտները շատ լավ մոտիվացված էին , քանի որ նոր նյութին վերաբերող գրեթե բոլոր առանցքային հարցերին կարողանում էին<br>ինքնուրույն պատասխաններ գտնել (իհարկե իմ կողմից տրվող ուղղորդող հարցերի օգնությամբ):<br>Շատ արդյունավետ էր նաև փոխադարձ քարտային աշխատանքը խմբերի միջև, որի նպատակը նյութն ամբողջությամբ յուրացնելն էր և առողջ համագործակցությունը:* |

Խմբի մասին տեղեկույթ
Ուսումնական հատուկ կարիքներ

Օժտված եւ տաղանդավոր

| Անուն | Ռազմավարություն |
|---|---|
| | |
| | |
| | |

Այլ աշակերտներ, որոնք մոտիվացիայի, վարքի եւ ուսումնառության խնդիրներ ունեն

| Անուն | Խնդիր | Ռազմավարություն |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

Ցածր առաջադիմությամբ աշակերտներ

| Անուն | Ներկա հաջողություն | Հաջողության հասնելու թիրախները | Պլանավորած ռազմավարություն |
|---|---|---|---|
| Զ. Ս. | Պատասխանում է պարզ հարցերին, կատարում որոշ գրավոր առաջադրանքներ | Կատարի թեմային վերաբերող պարզ առաջադրանքներ | Օգնել պարզ առաջադրանքների կատարման հարցում |
| | | | |
| | | | |

Դասապլան

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Առարկա՝ | Հայաստանի աշխարհագրություն | Ամսաթիվ | | Կիսամյակ | I | Դասարան | 9-րդ |
| Խմբի բացվածք՝ | Աղջիկ: 7 Տղա: 5 OS ՈՒՀԿ: | | | | | | |
| Թեմա՝ | *ՀՀ Բուսականությունը: Կենդանական աշխարհը* | | | | | | |
| Օգտագործվող նյութեր՝ | *Դասագիրք, տետր, ՀՀ բուսական աշխարհը քարտեզ, ՀՀ կենդանական աշխարհը քարտեզ,* | | | | | | |
| Ամբողջական պատկեր՝ | *Սովորողները արդեն ծանոթ են Հայկական լեռնաշխարհի բուսական և կենդանական աշխարհին, գիտեն տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ տեսակները: Կարողանում են տարբերակել յուրաքանչյուր գոտուն բնորոշ բուսատեսակները և կենդանատեսակները*<br>*Այդ գիտելիքների հիման վրա նրանք կկարողանան տեղայնացնել և թվարկել Հայաստանի Հանրապետության բուսականության վերընթաց գոտիները, կարող են նշել բուսական և կենդանական աշխարհի տարածման օրինաչափությունները:* | | | | | | |
| Դասի նպատակը՝ | *Իմանալ Հայաստանի Հանրապետության բուսական ու կենդանական աշխարհի տարածման առանձնահատկությունները:*<br>*Զարգացնել աշակերտների ճանաչողական հետաքրքրությունները հայրների երկրի բնության հանդեպ:* | | | | | | |
| | **Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ** | | | | | | |
| Վերջնարդյունքները | *Աշակերտը կկարողանա.*<br>• *Թվարկել բուսական և կենդանական աշխարհի տեսակները:*<br>• *Նկարագրել յուրաքանչյուր վերընթաց գոտու բուսական և կենդանական աշխարհը:*<br>• *Բացահայտել բուսական և կենդանական աշխարհի առանձնահատկությունները*<br>• *Կիրառելով ստացված գիտելիքները կներկայացնեն իրենց բնակավայրում տարածված , բուսատեսակներն ու կենդանատեսակները:* | | | | | | |

| Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները | Նպատակներին հասնելու ռազմավարությունը |
|---|---|
| *Աշակերտների հետաքրքրությունների մեծացում դասապրոցեսին և առողջ համագործակցության ապահովում:* | *Խմբային աշխատանք, ԳՐՄմեթոդի կիրառում, քարտեզների ուսումնասիրում* |

| Գործողություններ (ժամ/տևողություն) | Ուսումնական գործունեություն<br><br>*Աշակերտներ* | Պլանավորած տարբերակում և ՈւԳ ռազմավարություններ<br><br>*Ուսուցիչ* | Առանցքային հարցեր<br><br>Հիմնական ստուգումներ<br><br>(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին) |
|---|---|---|---|
| **8 րոպե**<br><br>**15 րոպե** | *Աշակերտները Լրացնում են թերթիկները, թե ինչ գիտեն և ինչ են ուզում սովորել այս դասի ընթացքում և թերթիկները փակցնում են աղյուսակի համապատասխան բաժնում::*<br><br>*Հանձնարարությունը յուրաքանչյուր խմբի աշակերտ նախ կատարում է առանձին, այնուհետև քննարկում է իր երեք նախադասությունները և մեկ ամփոփիչ նախադասությունը խմբի բոլոր* | *ԳՈՒՍ մեթոդի կիրառմամբ աշակերտներին ներգրավել դասին: Գրատախտակին գծում է աղյուսակ, որտեղ լրացվում է թե ինչ գիտեն աշակերտները այս դասի մասին և ինչ են ուզում իմանալ:*<br><br>*<<Երեք բանալի և մեկ կողպեք>> մեթոդով անցկացնել դասը*<br><br>*Դասարանը բաժանել 3 խմբի և յուրաքանչյուր խմբին հանձնարարել ընթերցել դասի մեկ հատված՝*<br>*1. Բուսականությունը, Կենդանական աշխարհը*<br>*2. Անապատային և կիսաանապատային գոտի,* | *Ի՞նչ գիտեք ՀՀ բուսական աշխարհի մասին: Ի՞նչ գիտեք ՀՀ կենդանական աշխարհի մասին: Ի՞նչ եք ուզում իմանալ ՀՀ բուսական և կենդանական աշխարհի մասին: (Նպ. Գիտելիքների ստուգում և վերհանում):*<br><br>*Ի՞նչ գործոններով է պայմանավորված ՀՀ բուսականության և կենդանական աշխարհի բազմազանությունը: Նշե՛ք յուրաքանչյուր գոտու* |

| | | | |
|---|---|---|---|
| 15 րոպե<br><br>7 րոպե | *անդամների հետ:*<br><br>*Խումբը համատեղ աշխատանքով ձևակերպում է ընդհանուր պարբերության երեք հիմնական նախադասությունները և մեկ ընդհանուր նախադասությունը:*<br><br>*Խմբային քննարկումից հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իրենց կողմից դուրս բերված երեք նախադասությունները/բանալիները/ և մեկ ամփոփող նախադասությունը/կողպեքը/, հիմնավորելով դրանք;*<br>*Այս ընթացքում հիմնականում բացատրվում և վերլուծվում է ամբողջ դասը:*<br><br>*Յուրաքանչյուր աշակերտ թերթիկի* | *Լեռնային գոտի*<br>*3. Տափաստանային գոտի, Անտառային գոտի, Մերձալպյան և ալպյան գոտի:*<br>*Յուրաքանչյուր խմբին հանձնարարել գրել երեք նախադասություն, որոնք արտահայտում են տվյալ հատվածի հիմնական բովանդակությունը, և մեկ նախադասություն, որով կարելի է ամփոփել այն:*<br><br>*Քննարկման ընթացքում ուղղորդում է աշակերտներին և պատասխանում անհասկանալի հարցերին:*<br><br>*Յուրաքանչյուր խմբից ընտրում է մեկ աշակերտ, ով կներկայցնի իր խմբի աշխատանքը, Աշակերտներին օգնում է քարտեզի կիրառման հարցում ցույց տալով բուսական և կենդանական աշխարհի տարածման շրջանները:* | *բուսածածկույթի և կենդանական աշխարհի կապը: (Նպ.՝ տրամաբանական մտածողության զարգացում)*<br><br>*Համեմատե՛ք գոտիներն ըստ տնտեսական նշանակության ռեսուրսների:*<br><br>*Նպ. Բարձր մտածողության հմտությունների զարգացում:*<br><br>*Արդյունքում կամբողջացվեն աշակերտների* |

| | | | |
|---|---|---|---|
| | *վրա լրացնում է, թե ինչ սովորեց այսօր և բաձրաձայն ընթերցելուց հետո, փակցնում աղյուսակի համապատասխան բաժնում:* | *Հանձնարարում է աշակերտներին թերթիկների վրա լրացնել թե ինչ սովորեցին այսօր:* | *ստացած գիտելիքները ՀՀ բուսականությունը: Կենդանական աշխարհը թեմայի վերաբերյալ:* |
| **Տերմիններ**<br><br>**Գրագիտություն**<br><br>**Թվագիտություն** | *Պատատուկ, ոգնաթուփ, օշինդր, տորոն, սգնի, բեզոարյան այծ, կովկասյան փասիան, հայկական եղջերավոր օձ:*<br><br>*Բուսական և կենդանական աշխարհի տեսակային կազմի իմացությունը, ինչպես նաև դրանց տարածման օրնաչփությունների և դրանց տարածման միջև առկա կապերի բացահայտումը աշակերտների մոտ զարգացնում է աշխարհագրական և քարտեզագրական գրագիտություն:* | | |
| **Աջակցություն** | | | |
| **Գնահատում** | *Գնահատել Խմբերի աշխատանքը և ակտիվ մասնակցություն ցուցաբերած աշակերտներին ձևավորող գնահատմամաբ: Իսկ բարձր արդյունք ցուցաբերած աշակերտները կստանան թվանշանային գնահատականներ:* | | |
| **Տնային աշխատանք** | *Որպես տնային առաջադրանք հանձնարարել գրել իրենց Գեղարքունիքի մարզում տարածված բուսատեսակներն ու կենդանատեսակները:* | | |
| **Դասին անդրադարձ** | *Դասն անցավ բավականին արդյունավետ և աշակերտների ակտիվ մասնակցությամբ: Աշակերտները շատ լավ մոտիվացված էին , քանի որ նոր նյութին վերաբերող գրեթե բոլոր առանցքային հարցերին կարողանում էին ինքնուրույն պատասխաններ: Մեթոդների ընտրությունը հնարվորություն տվեց աշակերտներին ամբողջությամբ յուացնել դասը:* | | |

## Խմբի մասին տեղեկույթ
## Ուսումնական հատուկ կարիքներ

Օժտված եւ տաղանդավոր

| Անուն | Ռազմավարություն |
|---|---|
| | |
| | |
| | |

Այլ աշակերտներ, որոնք մոտիվացիայի, վարքի եւ ուսումնառության խնդիրներ ունեն

| Անուն | Խնդիր | Ռազմավարություն |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

Ցածր առաջադիմությամբ աշակերտներ

| Անուն | Ներկա հաջողություն | Հաջողության հասնելու թիրախները | Պլանավորած ռազմավարություն |
|---|---|---|---|
| Ժ Մ | Պատասխանում է պարզ հարցերին, կատարում որոշ գրավոր առաջադրանքներ | Կատարի թեմային վերաբերող պարզ առաջադրանքներ | Օգնել պարզ առաջադրանքների կատարման հարցում |
| | | | |
| | | | |

# Դասապլան

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Առարկա՝ | Հայաստանի աշխարհագրություն | Ամսաթիվ | | Կիսամյակ | I | Դասարան | 9-րդ |
| Խմբի բացվածք՝ | Աղջիկ: 8 Տղա: 15 OS ՈՒՀԿ: | | | | | | |
| Թեմա՝ | ՀՀ Լանդշաֆտները ։վերընթաց գոտիականությունը | | | | | | |
| Օգտագործվող նյութեր՝ | Դասագիրք, տետր, ՀՀ լանդշաֆտային գոտիների քարտեզ | | | | | | |
| Ամբողջական պատկեր՝ | Սովորողները արդեն ծանոթ են Հայկական լեռնաշխարհի լանդշաֆտային գոտիներին, գիտեն վերընթաց լանդշաֆտային գոտիները։ Կարողանում են տարբերակել ուղղաձիգ և հորիզոնական գոտիականություն հասկացությունները։<br>Այդ գիտելիքների հիման վրա նրանք կկարողանան տեղայնացնել և թվարկել Հայաստանի Հանրապետության Լանդշաֆտային գոտիները, կարող են նշել լանդշաֆտային գոտիականության օրինաչափությունները։ | | | | | | |
| Դասի նպատակը՝ | Իմանալ Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները, ինչպես նաև դրանց առաջացման գլխավոր պատճառները։ | | | | | | |
| | Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ | | | | | | |
| Վերջնարդյունքները | Աշակերտը կկարողանա.<br>• Թվարկել ՀՀ լանդշաֆտային գոտիները<br>• Նկարագրել լանդշաֆտային գոտիները<br>• Բացահայտել գոտիների առանձնահատկությունները<br>• Համեմատել գոտիները միմյանց հետ<br>• Կիրառելով ստացված գիտելիքները կորոշեն, թե որ լանդշաֆտային գոտում է գտնվում իրենց բնակավայրը։ | | | | | | |
| Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները | Նպատակներին հասնելու ռազմավարությունը | | | | | | |

| | |
|---|---|
| Աշակերտների հետաքրքրությունների մեծացում դասապրոցեսին և առողջ համագործակցության ապահովում: | Խմբային աշխատանք, քարտեզների ուսումնասիրում |

| Գործողություններ (ժամ/տևողություն) | Ուսումնական գործունեություն<br><br>Աշակերտներ | Պլանավորած տարբերակում և ՈՒԳ ռազմավարություններ<br><br>Ուսուցիչ | Առանցքային հարցեր<br><br>Հիմնական ստուգումներ<br><br>(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին) |
|---|---|---|---|
| 5 րոպե | Աշակերտները պլանավորված հարցերի միջոցով կներկայացնեն վերընթաց լանդշաֆտային գոտիների ընդհանուր բնութագիրը և առանձնահատկություններ: | Մտագրոհ մեթոդով վերհիշել և ամբողջացնել աշակերտների ունեցած գիտելիքները Լանդշաֆտային գոտիների վերաբերյալ:<br><br><<Երեք բանալի և մեկ կողպեք>> մեթոդով անցկացնել դասը | Ի՞նչ է գոտիականությունը :<br>Գոտիականության որ տիպն է բնորոշ լեռնային տարածաշրջաններին:<br>Ինչպիսի առանձնահատկություններ ունեն լանդշաֆտային գոտիները:<br>Թվարկել Լանդշաֆտային գոտիները:<br>ՀՀ տարածքում ի՞նչ վերընթաց գոտիներ են առանձնացվում (Նպ. Գիտելիքների ստուգում և վերհանում): |
| 20 րոպե | Հանձնարարությունը յուրաքանչյուր խմբի աշակերտ նախ կատարում է առանձին, այնուհետև քննարկում է իր երեք | Դասարանը բաժանել 4խմբի և յուրաքանչյուր խմբին հանձնարարել ընթերցել դասի մեկ հատված՝<br>1. Անապատակիսաանապատային<br>2. Լեռնատափաստանայի | Ինչո՞ւ է լեռնատափաստանային լանդշաֆտն ամենատարածվածը ՀՀ-ում:<br>(Նպ.՝ տրամաբանական մտածողության |

| | | | |
|---|---|---|---|
| | նախադասությունները և մեկ ամփոփիչ նախադասությունը խմբի բոլոր անդամների հետ:<br><br>Խումբը համատեղ աշխատանքով ձևակերպում է ընդհանուր պարբերության երեք հիմնական նախադասությունները և մեկ ընդհանուր նախադասությունը:<br><br>Աշակերտներն ուսուցչի օգնությամբ ուրվագծային քարտեզի վրա գրում են լանդշաֆտային գոտիները: Աշակերտները ներկայացնում են դասի իրենց կողմից յուրացված հատվածը, որի ընթացքում բացատրվում և վերլուծվում է ամբողջ դասը: | ն,<br>3. լեռնանտառային<br>4. Մերձալպյան, ալպյան և ձյունամերձ<br>լանդշաֆտներ:<br>Յուրաքանչյուր խմբին հանձնարարել գրել երեք նախադասություն, որոնք արտահայտում են տվյալ հատվածի հիմնական բովանդակությունը, և մեկ նախադասություն, որով կարելի է ամփոփել այն:<br><br>Ուղղորդում է աշակերտներին և պատասխանում անհասկանալի հարցերին:<br><br>Զարգացնում է աշակերտների ընդհանրացում կատարելու հմտությունը: Քարտեզի կիրառմամբ ամփոփում է դասը: | զարգացում)<br><br>Ի՞նչ առանձնահատկություններ ունի լանդշաֆտների վերընթաց գոտիականությունը ՀՀ-ում:<br>Ինչո՞ւ է անհրաժեշտ անտառների ընդարձակումն եւ պահպանումը: |
| **15 րոպե** | | | |
| **5 րոպե** | Ուսուցչի օգնությամբ յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր լանդշաֆտային գոտուն բնորոշ հարցեր մյուս խմբի համար (հարցերը կտան I- III, II- IV սկզբունքով ): | Հանձնարարել իմբերին քարտերի վրա հարցեր կազմել մյուս խմբի համար ( I- III, II -IV), և ստուգել աշակերտների ստացած գիտելիքները այս դասի ընթացքում | Արդյունքում կամբողջացվեն աշակերտների ստացած գիտելիքները “Լանդշաֆտները: Վերընթաց գոտիականություն” թեմայի վերաբերյալ: |

| | | | |
|---|---|---|---|
| Տերմիններ<br><br>Գրագիտություն<br><br>Թվագիտություն | Լանդշաֆտ աշխարհագրական համեմատաբար միասեռ տարածք, որտեղ բնական միջավայրի հիմնական բաղադրիչները՝ ռելիեֆը, կլիման, ջրերը, հողերը, բուսական ու կենդանական աշխարհները, գտնվում են բարդ օրինաչափ փոխազդեցության մեջ, փոխպայմանավորված են և կազմում են մեկ միասնական երկրահամակարգ։՝, վերընթաց գոտիականություն, անապատակիսաանապատային, լեռնատափաստանային,լեռնանտառային, Մերձալպյան ալպյան լանդշաֆտներ։<br>Հայաստանի Հանրապետության լանդշաֆտների իմացությունը, ինչպես նաև դրանց առանձնացման օրինաչափությունների բացահայտումը, օգտագործման հնարավորությունների պարզաբանումը և քարտեզի կիրառումը աշակերտների մոտ զարգացնում է աշխարհագրական գրագիտություն և թվաբանություն։ | | |
| Աջակցություն | | | |
| Գնահատում | Գնահատել Խմբերի աշխատանքը և ակտիվ մասնակցություն ցուցաբերած աշակերտներին, ձևավորող և թվանշանային գնահատականներ։ | | |
| Տնային աշխատանք | Որպես տնային առաջադրանք հանձնարարել գունավորել ՀՀ լանդշաֆտների ուրվագծային քարտեզը։ | | |
| Դասին անդրադարձ | Դասն անցավ բավականին արդյունավետ և աշակերտների ակտիվ մասնակցությամբ։ Աշակերտները շատ լավ մոտիվացված էին , քանի որ նոր նյութին վերաբերող գրեթե բոլոր առանցքային հարցերին կարողանում էին ինքնուրույն պատասխաններ գտնել (իհարկե իմ կողմից տրվող ուղղորդող հարցերի օգնությամբ)։<br>Շատ արդյունավետ էր նաև փոխադարձ քարտային աշխատանքը խմբերի միջև, որի նպատակը նյութն ամբողջությամբ յուրացնելն էր և առողջ համագործակցությունը։ | | |

**Խմբի մասին տեղեկույթ**
**Ուսումնական հատուկ կարիքներ**

**Օժտված եւ տաղանդավոր**

| Անուն | Ռազմավարություն |
|---|---|
| | |
| | |
| | |

**Այլ աշակերտներ, որոնք մոտիվացիայի, վարքի եւ ուսումնառության խնդիրներ ունեն**

| Անուն | Խնդիր | Ռազմավարություն |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

**Ցածր առաջադիմությամբ աշակերտներ**

| Անուն | Ներկա հաջողություն | Հաջողության հասնելու թիրախները | Պլանավորած ռազմավարություն |
|---|---|---|---|
| Ժ. Մ. | Պատասխանում է պարզ հարցերին, կատարում որոշ գրավոր առաջադրանքներ | Կատարի թեմային վերաբերող պարզ առաջադրանքներ | Օգնել պարզ առաջադրանքների կատարման հարցում |
| | | | |
| | | | |